ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «10» մայիսի 2019 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 15-Ա/Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԵԼԱՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ «ՀՀ ԿԳՆ ԳԿ - ՀՀԲՀՀ - 2018» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով 2018թ. մարտի 23-ի «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 12-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի «ՀՀ ԿԳՆ ԳԿ - ՀՀԲՀՀ - 2018» միջազգային մրցույթին ներկայացված գիտական ծրագրերի հայտերի գնահատման նպատակով 01.11.2018թ. թիվ 48-Ա/Ք հրամանով ստեղծված մասնագիտական փորձագիտական խորհրդի նիստի 30.04.2019թ. թիվ 3 արձանագրությունը, ինչպես նաև Հիմնարար հետազոտությունների բելառուսական հանրապետական հիմնադրամի գիտական խորհրդի նախագահի կողմից 29.04.2019թ. հաստատված ցանկը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի և Հիմնարար հետազոտությունների բելառուսական հանրապետական հիմնադրամի կողմից անցկացված գիտական հետազոտությունների համատեղ նախագծերի աջակցության **«ՀՀ ԿԳՆ ԳԿ - ՀՀԲՀՀ - 2018»** միջազգային մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված գիտական ծրագրերի ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. **«ՀՀ ԿԳՆ ԳՊԿ - ՀՀԲՀՀ- 2018»** միջազգային մրցույթի արդյունքում երաշխավորված գիտական ծրագրերի ֆինանսավորումն սկսել 2019 թ. հուլիսի 1-ից:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի գլխավոր քարտուղար Լ. Մարդոյանին:

ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
ՀՀ ԿԳՆ ԳԿ նախագահի
2019 թ. մայիսի 10-ի
թիվ 15-Ա/Ք հրամանի

ՑԱՆԿ[i]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԵԼԱՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ «ՀՀ ԿԳՆ ԳԿ - ՀՀԲՀՀ - 2018» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ

Հ/հ	Ծածկագիր	Ծրագրի անվանում	Ղեկավար	Գիտական կազմակերպություն
1	18BL-011	ԲԻՍ եղանակով ստացված ինտերմետաղական միացությունների կառուցվածքագոյացումը և հատկությունները նանոհավելանյութերի ներկայությամբ ուլտրաձայնային ակտիվացման միջոցով	Աբովյան Լարիսա Սուրենի	ՀՀ ԳԱԱ Ա. Բ. Նալբանդյանի անվ. քիմիական ֆիզիկայի ինստիտուտ
2	18BL-039	Արբովիրուսային և մակաբուծային վարակներ փոխանցող արյունածուծ հոդվածոտանիների բազմազանությունը, տարածվածությունը և համաճարակաբանական կարգավիճակը Հայաստանում և Բելառուսում	Աղայան Սարգիս Աղասու	ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն
3	18BL-014	Բելառուսական համայնքը Հայաստանում և հայկական համայնքը Բելառուսում. էթնիկ ինքնությունը և միջմշակութային փոխառնչությունները արդի շրջանում	Գալստյան Միհրան Վարդգեսի	ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
4	18BL-015	Պիկովայրկյան իմպուլսների գեներացում 999.6 նմ ալիքի երկարության վրա իտերբիում պարունակող ալյումինատների բյուրեղներում	Դերձյան Մարինա Վազգենի	ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ

5	18BL-010	Գերկարճ լազերային իմպուլսների փոխազդեցությունը պինդ մակերևույթի հետ և կիրառումը լույսով ղեկավարվող ատոմական դեպոզիցիայի և մետաղական թաղանթների միկրոկառուցվածքավորման համար	Դրամփյան Ռաֆայել Խաժակի	ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ
6	18BL-009	Կենսաէլեկտրաքիմիական սարքերում օգտագործվող մանրէային օքսիդառեդուկտազների ակտիվության օքսիդավերականգնողական կարգավորումը	Թռչունյան Արմեն Համբարձումի	ՀՀ ԿԳՆ Երևանի պետական համալսարան
7	18BL-028	Բազմաբաղադրիչ ալոգեն բջիջների կենսահամատեղելիությունը լյարդի ապաբջջայնացված սքաֆոլդի հետ	Կարաբեկյան Զարուհի Իվանի	ՀՀ ԳԱԱ Լ. Օրբելու անվ. ֆիզիլիոգայի ինստիտուտ
8	18BL-040	Մանրէային մելանինի կիրառումը՝ որպես հազվագյուտ դեղաբույսերի և տեղային տեսակների բարձր գեղազարդությամբ բույսերի աճի և զարգացման խթանիչ	Հովսեփյան Անիչկա Սերյոժայի	ՀՀ ԳԱԱ <<Հայկենսատեխնոլոգիա>> ԳԱԿ
9	18BL-020	Տերահերցից մինչև ուլտրամանուշակագույն տիրույթում ճառագայթման աղբյուրներ և կլանիչներ՝ հիմնված գրաֆենային նանոկառուցվածքներում պլազմոն-պոլարիտոնների գրգռման վրա	Մկրտչյան Գառնիկ Ֆելիքսի	ՀՀ ԿԳՆ Երևանի պետական համալսարան
10	18BL-023	XX-XXI դդ. էթնոմշակութային գործընթացները. Հայաստանի և Բելառուսի քաղաքների համեմատական ուսումնասիրություն	Պողոսյան Սվետլանա Հայկի	ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

[i] Բելառուսական կողմի համաղեկավարների և կազմակերպությունների համար տե՛ս http://fond.bas-net.by/it234.html